ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Անհրաժեշտ է թեստ-գրքույկի առաջադրանքները լուծելուց հետո ուշադիր լրացնել ձևաթուղթը. թեստ-գրքույկը չի ստուգվում, ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:

Ուշադիր կարդացե՛ք ձևաթղթի լրացման կանոնները:

1-10 առաջադրանքները ընտրովի պատասխանով են. ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Այդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: Միևնույն առաջադրանքի համարի տակ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

11-16 առաջադրանքներից և 17, 18 առաջադրանքների ենթառաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր. պահանջին կարող են համապատասխանել մեկից ավելի թվեր: Ձևաթղթում դրանց համարներին համապատասխանող վանդակներում հարկավոր է դնել X նշանը: Այդ առաջադրանքների համար 1 միավոր կարող եք ստանալ այն դեպքում, եթե ճիշտ են արված բոլոր նշումները:

19-30 առաջադրանքներում պահանջվում է նշել 3 ճիշտ պատասխանները: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1-ական միավորով, այսպես, եթե Ձեր 3 նշումներից 3-ն էլ ճիշտ են, վաստակում եք 3 միավոր, 2 ճիշտ նշման դեպքում՝ 2 միավոր, 1 ճիշտ նշման դեպքում՝ 1 միավոր: Նշումները պետք է կատարել միևնույն եղանակով՝ համարներին համապատասխանող վանդակներում դնելով X նշանը, սակայն տվյալ առաջադրանքի տողում ***չի կարելի կատարել 3-ից ավելի նշում:*** *Միևնույն տողում ցանկացած 4 և ավելի նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 3 նշումներ:*

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն:

1 **Ո՞ր շարքի բառերից ոչ մեկում ուղղագրական սխալ *չկա:*** *(1 միավոր)*

1) անդադրում, բազրիք, դշխուհի, արհավիրհք
2) անհեթեթ, հանապազորդ, գձուծ, մեդալիոն
3) ակրատ, զարտուղի, արթմնի, խառնիճաղանջ
4) ամբարտավան, լեգեոն, խափշիկ, տարրերք

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի դիմաց է հնչյունափոխության վերաբերյալ նշումը ճիշտ տրված:** *(1 միավոր)*

1) ջլապինդ– **ի>ը**, լրացվել– **ու>ը**, կենսագիր– **յա>ե**, քննություն– ***ի***-ն սղվել է
2) մատենադարան– **յա>ե**, չվերթ– **ի>ը**, ակնապիշ– ***ը***-ն սղվել է, ընչացք – **ու>ը**
3) առանձնանալ– ***ի***-ն սղվել է, տարօրինակ– **ե>ի**, հնոցապան – **ու>ը**, եղջերավոր– **յու>ե**
4) պարտիզպան– **ե>ի**, ձեռնասուն– **ը**-ն սղվել է, լուսավոր– ***յ***-ն սղվել է, հոգյակ– **ի>յ**

3 **Տառերով և թվերով նշված բառերից կազմված հոմանշային զույգերի ո՞ր շարքում սխալ համապատասխանեցում *չկա:*** *(1 միավոր)*

ա. նանիր, բ. վես, գ. մեղկ, դ. խոլական, ե. պագշոտ, զ. պաղպաջուն

1. թուլամորթ, 2. հեշտասեր, 3. շողշողուն, 4. սին, 5. սեգ, 6. ունայն, 7. վեհ, 8. մոլեգին, 9. դավադիր

1) ա-4, բ-5, գ-1, ե-2
2) ա-6, բ-5, դ-8, ե-9
3) ա-6, դ-8, ե-9, զ-3
4) բ-7, գ-1, դ-4, զ-3

4 **Ո՞ր տարբերակում կան մեկից ավելի անկանոն բայեր, որոնք տվյալ ձևում անկանոնություն են դրսևորել:** *(1 միավոր)*

1) Նա չէր իմանում՝ ինչ ասի, և վարանումով նայում էր մոռի թփերին, որ մուգ կանաչին էին տալիս ճամփի երկու կողքերին:
2) Մի ներքին ձայն Սմբատին ասաց, թե Շուշանիկի մեջ կգտնի այն, ինչ որ զուր կլիներ որոնել իր կնոջ մեջ:
3) Դու չեղար համեստորեն խոհեմ՝ իմ կողքը բազմելու, այժմ ե՛կ, կանգնի՛ր իմ դեմ որպես շղթայակապ գերի:
4) Ոսկանը հազիվ էր ոտքը դուրս դրել դարպասից, երբ անկյունադարձի վրա կանգնած տեսավ կաթոլիկ եկեղեցու ծանոթ հոգևորականին:

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածանցավոր:** *(1 միավոր)*

1) տարադրամ, բանուկ, փափուկ, դժպատեհ
2) ընթացք, մատույց, խշշոց, անճավ
3) ճկուն, ցնցոտի, պուրակ, գունատ
4) անդրաշխարհ, տրամաբան, հյուսկեն, հայելի

6 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն միավորների համարները, որոնք տրված տեքստում առկա են:**

Մենավոր մի դամբարան է ծածկում իր տակ ամփոփված մի հոգու հավերժական հանգիստը: Ասում են՝ Վարդանն է ննջում այդտեղ: Ճշմարի՞տ է դա՝ ոչ ոք չի կարող ասել: Բայց դաշտավայրի վճիտ լռության մեջ երբեմն կլսես մի կոկորդային մեղեդու մեղմաձայն ելևէջում. կարծես մեկը գեղգեղում է հինավուրց մի երգ: Մի վանական է թերևս կամ այլ անցորդ կամ խումբ-խումբ մարդիկ: Այդ մեղեդին երգվում է այն պահին, երբ ոտք ես դնում Ավարայրի դաշտավայրը: Դարերի հին երգն է դա՝ Վարդանանց նվիրված:

1. ձևի մակբայ, 2. դերանվանական հոլովման ենթարկվող բառ, 3. հարադրավոր բայ, 4. հարակատար դերբայ, 5. հաստատական վերաբերական, 6. ենթադրական եղանակի բայ, 7. անեզական գոյական, 8. պակասավոր բայ, 9. բազմապատկական բայ

1) 1, 2, 4, 5, 6, 7
2) 2, 4, 5, 6, 9
3) 1, 3, 5, 7, 9
4) 2, 3, 4, 6, 7, 8

7 **Ո՞ր նախադասության մեջ փակագծերում նշված շարահյուսական պաշտոնը կատարող անդամ *չկա:*** *(1 միավոր)*

1) Գարնան այս պայծառ օրը, երբ ուրախ արևը մեղմել է քարերի մռայլությունը, ես գրում եմ իմ մանկության, ծիրանի ծառի, իմ ընկեր Անդոյի մասին: *(ուղիղ խնդիր)*
2) Եթե Շապուհը փոքրիշատե մարդավարություն ունենար, չպիտի մոռանար այն մեծահոգությունը, որ իմ հայրը ցույց տվեց իրեն: *(հանգման անուղղակի խնդիր)*
3) Երբ Լառ-Մարգարը պառկում էր գերանների վրա, այնպես էր թվում, թե ինքն էլ փչակով գերաններից մեկն է: *(որոշիչ)*
4) Ինքը նմանվում է մի խեղդվող մարդու, որ, ալիքների հետ երկար կռվելուց հոգնած, վերջապես հանձնվում է նրանց կամքին: *(ներգործող խնդիր)*

8 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամի շարահյուսական վերլուծության սխալ *չկա:*** *(1 միավոր)*

Իրար վրա կրկնվող այս հրամանը մահապարտի սրտի մեջ այնքան խոր հուսահատություն առաջ բերեց, որ ես զգում էի այդ ահարկու սարսուռի՝ նրա բազուկների միջից իմ հոգուն փոխանցվելը: Նրա սևակնած աչքերից պարզ հասկացա, որ հրամանը նրա համար խելագարեցնելու աստիճան սահմռկեցնող էր:

1) **պարզ**- ձևի պարագա, **փոխանցվելը**- ենթակա, **կրկնվող**- որոշիչ
2) **սարսուռի**- հատկացուցիչ, **հոգուն**- հանգման խնդիր, **հրամանը**- ենթակա
3) **այնքան** - չափի պարագա, **աչքերից**-հիմունքի պարագա, **առաջ բերեց**- պարզ ստորոգյալ
4) **իրար վրա**- տեղի պարագա, **հուսահատություն** -ուղիղ խնդիր, **սահմռկեցնող էր**- բաղադրյալ ստորոգյալ

9 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:** *(1 միավոր)*

1) Նա ցավով ու տառապանքով գրեց «Երկիր Նաիրին»՝ հայրենիքի ճակատագրին նվիրված մի գիրք՝ լի խոր թախիծով:
2) Մեծատաղանդ քանդակագործ-մանրանկարիչ Մոմիկը ծնվել ու ապրել է Սյունյաց աշխարհում՝ տասներեքից տասնչորսերորդ դարերում:
3) Ըստ նախնական պայմանավորվածության՝ եթե Մոմիկը սեղմ ժամկետում ավարտին հասցներ հոյակապ տաճարի շինարարությունը, իշխանն իր դստերը կնության կտար նրան:
4) Տեսնելով աղջկան՝ տղան անմիջապես ընդառաջ գնաց, և երկուսով սուզվեցին հանդեսում պարողների հորձանքի մեջ:

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:** *(1 միավոր)*

1) բաղաձայն, սպի, շարասյուն, ակնաբույժ
2) խոտհարք, վերջնագիր, գրաբեր, հարացույց
3) խցանահան, պատճեն, տոնածառ, վաչկատուն
4) ուղեկալ, համհարզ, կողմնացույց, քարհատ

11 **Բաղադրյալ հատուկ անուններից որոնցո՞ւմ գրության սխալ կա:**

1. Աթենաս-Պալլաս, 2. Կենտրոնական Եվրոպա, 3. Անթիլիասի Կաթողիկոսարան, 4. Անկախության Հռչակագիր, 5. Բագրատունյաց թագավորություն, 6. Աղբյուր Սերոբ, 7. Արևելյան Սիբիր, 8. Լյուքսեմբուրգի մեծ դքսություն, 9. Ճապոնական Կղզիներ

12 **Ո՞ր բառերում հնչյունափոխություն *չկա:*** *(1 միավոր)*

1. դրսեկ, 2. զրախոս, 3. կպչել, 4. խլափեղկ, 5. զրահապատ, 6. ուշագնաց, 7. մշկահոտ, 8. մշուշոտ, 9. ատենակալ

13 **Ո՞ր դարձվածքներն են սխալ բացատրված:** *(1 միավոր)*

1. ***եղանակ ստեղծել*** – որևէ գործում որոշիչ դեր ունենալ
2. ***ականջի հետևը գցել*** – մտապահել՝ վրեժխնդիր լինելու համար
3. ***գլուխ բարձրացնել*** – առաջանալ, գոյանալ
4. ***ձեռք բարձրացնել*** – որևէ գործ ձեռնարկել
5. ***ոտքերի տակ կրակ վառվել*** – անհամբերությունից չկարողանալ դիմանալ
6. ***(այսինչի) փողոցում էլ տոն կլինի*** – երբևէ բախտը կժպտա
7. ***հյութերը քամել*** – տանջել, չարչարել
8. ***շրթունքը կծել*** – զսպել, պահել զայրույթը, ծիծաղը և այլն
9. ***Պյուրոսյան հաղթանակ*** – կասկածելի հաջողություն՝ մեծ կորուստների գնով

14 **Ո՞ր բառազույգերի բառերը հոմանիշներ *չեն:*** *(1 միավոր)*

1. կավատ–միջնորդ, 2. գազել–վիթ, 3. բանդագուշանք–նախազգացում, 4. տարփանք–տեսիլք, 5. անդուլ–անդադար, 6. հյուլե–ատոմ, 7. շողոմ–բանսարկու, 8. ժուժկալ–սակավապետ, 9. բանախոս–պատվիրակ

15 **Ո՞ր բառերը կազմությամբ բարդաձանցավոր *չեն:*** *(1 միավոր)*

1. բարձրաստիճան, 2. տաղերգու, 3. հողաբաժին, 4. կանխահաշիվ, 5. բառահոդված, 6. մակբայակերտ, 7. համատարած, 8. ձնծաղիկ, 9. հուշարձան

16 **Տրված բառերից որո՞նք համանուն ունեն:** *(1 միավոր)*

1. գլուխ, 2. մասին, 3. լազուր, 4. գորշ, 5. ափ, 6. կարի, 7. խնամի, 8. կողակից, 9. այր

17 **Նշել տվյալ բնորոշմանը համապատասխանող նախադասությունների համարները:**
(9 միավոր)

1. Ըստ իմ պատկերացման՝ աշխարհում եղել է երկու քրիստոնյա՝ մեկը ինքը՝ Քրիստոսը, մյուսը՝ մայրս: 2. Մայրս միայն մի գիրք էր կարդում՝ Ավետարանը, և ամբողջ օրը ջանում էր իրագործել նրա պատվիրանները: 3. Լինելով կալվածատիրոջ կին՝ աղքատների հետ ճաշի էր նստում, իր ունեցածից բաշխում այդ դժբախտ մարդկանց՝ պայմանով, որ հայրս այդ մասին չտեղեկացվի: 4. Հորիցս գաղտնի (բոլորիս խստորեն պատվիրում էր, որ նրան լուր չտանք) օգնում էր լվացարարուհիներին, հատակն էր մաքրում, այսինքն՝ ապրում էր այնպես, ինչպես ապրում է մի սովորական գավառաբնակ կին:

5. Եվ աղոթում էր այդ կինը թախծագին, աղոթում էր հորս, պանդուխտ եղբայրներիս համար, և արցունքները գլորվում էին այտերով: 6. Ամենամռայլ թախիծն է պատում ինձ, երբ հիշում եմ, որ կաթկթել են մորս արցունքները նաև իմ պատճառով: 7. Եվ ուզում եմ, որ այժմ մեկն ինձ խոշտանգի, որպեսզի հանգստանա իմ թշվառ հոգին, թերևս խաղաղվի ողբն իմ որբացած հոգում: 8. Կոծում են հողմերը, աշխարհը ցուրտ է, բայց մայրս ժպտում է մեր կապույտ լեռներից ելնող արևի միջից: 9. Տեսնում եմ նրա ծամերը՝ արևի շողերին խառնված, և լսում եմ մորս ձայնը ու զգում՝ ինչպես է սավառնում տիեզերական ցնծությունը:

17.1 ածանցավոր բայ ունեցող նախադասություն(ներ)

17.2 կրավորական սեռի բայ ունեցող նախադասություն(ներ)

17.3 անկախ դերբայ ունեցող նախադասություն(ներ)

17.4 վերաբերական ունեցող նախադասություն(ներ)

17.5 ***ու*** հոլովման ենթարկվող բառ ունեցող նախադասություն(ներ)

17.6 կապ ունեցող նախադասություն(ներ)

17.7 մակբայ ունեցող նախադասություն(ներ)

17.8 անկանոն բայ ունեցող նախադասություն(ներ)

17.9 հարաբերական դերանուն ունեցող նախադասություն(ներ)

18 **Նշել տվյալ բնորոշմանը համապատասխանող նախադասությունների համարները:**
(9 միավոր)

1. Հանգչում էր աղմուկը. քաղաքը դաշտ էր թվում անծայրածիր, ուր լուսաբացին առաջին մեքենայի աղմուկից սկսվել էր ժխորը, կեսօրին թեժացել, ապա մարել: 2. Երեկոյան պղնձագործները հավաքել էին պղինձը, դարբինները դարսել էին մուրճերը, լռել էին մեքենաները, չկար ոչ մի ձայն:

3. Երեկոյի տաք անձրևը ծաղկել սկսող ծառերին, մայթի քարերին, ծանր կավահողին բաշխել էր զով, պղտոր ջրի լճակներ: 4. Սպիտակ ամպերը հսկա զանգվածներով սարերից սողացել էին քաղաք և անգլուխ քարավանի նման դանդաղ ու մունջ պտույտներ էին անում փողոցներով, տների կտուրներին քսվելով՝ անցնում:

5. Բարձր հարկերը հազիվ էին երևում ամպերի սպիտակ քուլաների մեջ. նրանք օրորվում էին՝ իրենց հետ օրորելով ամեն ինչ՝ հեռագրասյուները, էլեկտրական լամպերը և նրանց ցոլքը անձրևաջրի պղտոր լճակներում:

6. Ամբողջ քաղաքի վրա բարձր աշտարակից ռադիոն թափում էր գարնանային երգի տաք ելևէջներ: 7. Աշտարակում ինչ-որ աղջիկ մաքուր ձայնով երգում էր բամբակի դաշտերի, ցորենի հասունացած արտերի մասին: 8. Բազմաթիվ բարձրախոսներ այդ զվարթ երգը մաղում էին քաղաքի վրա, իսկ դրանց տակ խմբված մարդիկ՝ մշակը՝ հենված պատին, լրագրավաճառը՝ թերթերը թևի տակ, տղան՝ աղջկա թևը գրկած, ուշադիր լսում էին: 9. Նույնիսկ ձիերը ամբողջովին անշարժ էին, ու թվում էր՝ խորասուզված լսում են:

18.1 ուղիղ խնդիր ***չունեցող*** նախադասություն(ներ)

18.2 բաղադրյալ ստորոգյալ ունեցող նախադասություն(ներ)

18.3 ժամանակի պարագա ունեցող նախադասություն(ներ)

18.4 տեղի պարագա ***չունեցող*** նախադասություն(ներ)

18.5 բացահայտիչ ունեցող նախադասություն(ներ)

18.6 բազմակի անդամներ ունեցող նախադասություն(ներ)

18.7 զեղչված ենթակա և/կամ զեղչված ստորոգյալ ունեցող նախադասություն(ներ)

18.8 դերբայական դարձված ունեցող նախադասություն(ներ)

18.9 դերանունով արտահայտված որոշիչ ունեցող նախադասություն(ներ)

19 **Հատվածներից 3-ում դարձվածք կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Եվ կբերեմ ես քեզ ուրախություն մի մեծ
   Անակնկալ դարձիս իրողությամբ,
   Քո տան ու քո հոգու տարողությամբ,
   Երազներիդ, կյանքիդ տևողությամբ:

2. Դու մեր անցած բոլոր ուղիներում մթար
   Ե՛վ զրահ ես եղել, և՛ զորավիգ,
   Մարմնավորել ես դու մեր գաղափարն արդար,
   Դարձել Ցասման Սիեր, Թլոր Դավիթ:

3. Առաջին սերս ձնծաղիկի պես
   Ձնհալի միջից մի անգամ ժպտաց,
   Ինձ ոտից գլուխ մի անգամ չափեց
   Եվ իսկույն փակեց աչիկները թաց:

4. Աշնանային մի օր այցելեցի քեզ հետ
   Լեռների մեջ կորած ծննդավայրը քո:
   Մի փրփրած, ճերմակ, սանձակոտոր մի գետ
   Մեզ ուղեկից եղավ ու բամբ սրտմտանքով
   Առասպելներ պատմեց ամբողջ ճանապարհին:

5. Ինձ այն ծաղկաբույր լեռներն են տանում,
   Այն բարձունքներն են ինձ տանում կրկին,
   Ուր մարդն ամպերին վերից է նայում,
   Վերից է նայում արծվի ճախրանքին:

6. Ինձ խաբեցին ամենուր,
   Խաբեությամբ խաչեցին:
   Ձեռքիս խաչբուռը առան
   Ու վրաս խաչ քաշեցին:

7. Ես քեզ մոռանալ,
   Քեզանից հեռանալ
   Չեմ կարողանում:
   Ինձ քեզնից խլել,
   Ինձնից վերանալ
   Չեմ կարողանում...

8. Երկու ամպ եկան, հասան իրարու,
   Հետո հեռացան անհոգ ու անփույթ,
   Բայց վաղը անձրև կդառնան նրանք
   Եվ կհանդիպեն ծովերում հեռու,
   Իսկ մենք աշխարհում ինչ էլ որ դառնանք,
   Էլ ոչ մի անգամ չենք հանդիպելու:

9. Կանգնել ես քո բարձունքին
   Մեկուսի, մենակ, մենավոր...
   Իմ երես առած դարում
   Դու լքված այրի, մասրենի՛:

20 **Բառերից 3-ի բացատրությունը սխալ է: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ***դրվագել*** – մանրամասն ուսումնասիրել
2. ***ներանձն*** – ինքն իր մեջ ամփոփված
3. ***նիզ*** – հնագույն խոցող զենքի տեսակ
4. ***սնար*** – անկողնու՝ գլխատեղի մասը
5. ***պարտատուն*** – մեկի առջև պարտավորություն ունեցող
6. ***անխոնջ*** – առանց հոգնության
7. ***տատասկ*** – փշոտ տերևներով խոտաբույս
8. ***բալասան*** – զանազան բուժական խոտերից պատրաստվող դեղ
9. ***դիպակյա*** – մետաքսյա ոսկեթել և արծաթաթել կտորներից պատրաստված

21 **Շարքերից 3-ում տրված ածանցը կարող է բոլոր բառերի արմատներին (արմատներից մեկին) միանալ և բառ կազմել առանց երկրորդ ածանցի: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ***–վածք*** – կավաշեն, վերադառնալ, լվանալ
2. ***-ի*** – խաղամոլ, աղակույտ, ծառատունկ
3. ***արտ-*** – անժամանակ, ցոլցլուն, գնացք
4. ***տար(ա)-*** – ձևական, կուսակցություն, երկսեռ
5. ***-որդ*** – ինքնավար, ծանրակշիռ, չորսական
6. ***-ոն*** – ոսկեծամ, խաչագող, գործազուրկ
7. ***-յակ*** – նորահարս, եռաբլուր, ալեծածան
8. ***-ուտ*** – կաղնեփայտ, խախտել, շաքարեղեգն
9. ***-ուկ*** – ջերմագին, մարդամոտ, նեղաչք

22 **Նախադասություններից 3-ի դիմաց նրա տեսակի կամ ընդգծված մասի բնութագիրը սխալ է տրված: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. **Մթնեց.** ծերունին լուռ չարչարանքով Մի քանի կոճղեր շարեց կրակին: *(անդեմ)*

2. Աղջիկը պետք է որ շատ ուրախանար նվերներով, մինչդեռ նրա դեմքի սառը արտահայտությունը գրեթե չփոխվեց: *(բարդ համադասական)*

3. Ռուս բանաստեղծուհի Ցվետաևան ասել է. **«Սիրահարվում են օտարին**, իսկ հարազատին սիրում են»: *(անենթակա)*

4. Արագ բարձրացա ձորակով, **քայլեցի դեպի Օհան ապոր այգին**: *(թերի)*

5. **Երբեմնի հեքիաթային ամառանոցն այժմ մեռյալ էր.** երևի դրանից էր, որ կղզուն նայելիս ինչ-որ անբացատրելի թախիծ էինք զգում: *(գերադաս)*

6. Ինչու՞ եկավ այգին. **արդյոք Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին**: *(բարդ ստորադասական)*

7. **Հետաքրքիր են, անշուշտ, ոչ միայն կյանքն ու գործունեությունը,** այլև նրա հայացքներն ու խորհրդածությունները արվեստի շուրջ: *(համառոտ)*

8. Մեծ տիկինը, ինչպես երևում էր, կարևոր գործով էր եկել Ռշտունիք: *(պարզ ընդարձակ)*

9. Մինչ այդ երկու անգամ բարձրացել էր Մուսա լեռը՝ սոճիներն ու ժայռակույտերը տեսնելու, բայց երկու անգամ էլ դրանք չէր գտել: *(բարդ համադասական)*

23 **Նախադասություններից 3-ի գծապատկերում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Կան բանաստեղծներ, որոնք իրենք են խոսում, երբ ուզում են, բայց կան նաև այնպիսիները, որոնց ժամանակն է խոսեցնում, որովհետև ինքն իրեն ճանաչելու համար անտարակույս զգում է դրա կարիքը:



2. Մարդիկ ամեն անգամ, երբ դժվար հարաբերություններ են ստեղծվում, քեզ են դիմում, որ քո հեղինակավոր խոսքն ասես. ինչո՞ւ ես այսօր մի կողմ քաշվել և չես խառնվում հարևաններիդ վեճին, որն արդեն երկու օր շարունակվում է՝ խանգարելով բակի անդորրությանը:



3. Ես, որ թերևս խելոք մարդ եմ, ասում եմ ձեզ, որ երկնքում, իրոք, չկան աստվածներ, նրանք վաղուց այս երկրի վրա են բազմած, և մարդիկ միմյանց հասկանում են, երբ աստվածներն են խոսվում իրարից:



4. Լևոնը գիտեր, թե ինչն էր հետաքրքրում Գնելին, և ներողամիտ հեգնանքով էր վերաբերվում այն բանին, որ ընկերը մտածում էր, թե խմիչքը պիտի քանդի իր լեզվի կապերը, և ինքը պիտի պատմի դեպքի մանրամասնությունները:



5. Երբ նա, տեսնելով իրավիճակը, համոզվեց, որ իրենք այլևս մեկնել չեն կարողանա, որովհետև մեքենան վերանորոգվում է, առաջարկեց բոլորին, որ ցրվեն տները և սպասեն, մինչև այն ամբողջովին կնորոգվի ու կտրվի իրենց:



6. Եթե պատահում էր, որ արևի շողքը թափանցում էր ներս, տիկին Անահիտը դժգոհում էր, թե շողքը աչքերը ցավեցնում է, և սպասավորին ցույց էր տալիս վարագույրը, որը ընկնում էր օդակից ու ծածկում լույսը:



7. Ինքը հենց նա է, որ լաց է լինում, և թեպետ չգիտի ճամփեն էլ ձեր տան և ոչ մի անգամ չի եղել այնտեղ, բայց ձեզ այնքան է բարեկամացել ներքուստ, որ նրա վրա չի հաչի ձեր զգոն շունը:



8. Նախկին բանտերում աշխատանքը եղել է պարտադիր, սակայն տարբերությունն այն է, որ մեր ուղղիչ տանը դա այնպիսի աշխատանք էր, որի համար ոչ միայն կալանավորները վարձատրվում էին, այլև նրանց յուրաքանչյուր օրը մեկուկես օր էին համարում:



9. Երբ առավոտյան տեսա այն տասը կալանավորներին, որ նախրյան դանդաղկոտությամբ վարում էին հողը, ու մյուսներին, որ կոխոտում էին կավը բոբիկ ոտքերով, որ աղյուսներ պատրաստեն, չհավատացի, որ այդ գործը երբևէ գլուխ կգա:



24 **Նախադասություններից 3-ի ստորադաս բաղադրիչների բնույթները սխալ են տրված: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Ակնարկն այնքան հանդուգն էր, որ Սմբատը չկարողացավ իրեն զսպել և բարձր գոռաց: *(չափի պարագա)*
2. Ես, որ միշտ նեցուկ եմ եղել և պահպանել քեզ անկումից, թողեցի քեզ բախտի կամքին: *(բացահայտիչ)*
3. Ծնողներին շատ էր անհանգստացնում, որ իրենց որդին հաճախակի հիվանդանում էր: *(ենթակա)*
4. Շիրվանզադեն չէր հանդուրժում, երբ գրողը հեղինակային խոսքը խճողում էր բարբառային անհարկի տարրերով: (*ժամանակի պարագա)*
5. Մեռելների պես սփրթնած էինք. չէինք հավատում, որ ապրում ենք, կանք: *(ուղիղ խնդիր)*
6. Ով եկել էր գյուղից հեռու, նա թողել էր հողը խոնավ: *(ենթակա)*
7. Դերասանների համար բոլորովին հաճելի չի լինի, եթե հանդիսատեսները ներկայացման կեսից լքեն դահլիճը: *(պայմանի պարագա)*
8. Տարիներ անց նա հանկարծ սկսեց զբաղվել նրանով, ինչից խուսափել էր ամբողջ կյանքում: *(միջոցի խնդիր)*
9. Նրա դեմքին անջնջելի հետք է թողել կյանքի այն շրջանը, երբ տեղի են ունեցել հայտնի իրադարձությունները: *(որոշիչ)*

25 **Նախադասություններից 3-ում կետադրական սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Աղջիկն ամեն օր քնքշությամբ մոտենում էր այդ ծաղկեփնջին, նուրբ մատներով շոշափում վարդերի թերթիկները, որ մեկիկ-մեկիկ պոկվելով՝ թափվում էին ցած:
2. Ես անմիջապես հիշեցի այն տունը, որտեղ անհոգ ապրում էինք պատերազմն սկսվելուց առաջ, և մեր փոքրիկ ու խնամված այգին:
3. Սահակյանն անհրաժեշտ էր համարում ավարտել կիսատ թողած բոլոր գործերը, հարազատներին հրաժեշտ տալ՝ նախքան Վիեննա ուղևորվելը:
4. Քաղաքի՝ օրեցօր սաստկացող երթևեկության և մեքենաների խտության պատճառով կյանքն ավելի անհանգիստ էր դառնում, և նա շարունակ մտածում էր բնակության վայրը փոխելու մասին:
5. Աղոտ լուսավորության պատճառով այդ երիտասարդը մի առասպելական հսկա էր թվում ինձ, և նրա կերպարանքը կամաց-կամաց խորհրդավորություն էր ձեռք բերում:
6. Առաջին տարիներին՝ քանի դեռ հորեղբայր Ջոնն աշխատում էր քաղաքապետարանում, նրանք յուրաքանչյուր փոքր առիթով անհանգստացնում էին նրան, դիմում պատեհ-անպատեհ խնդրանքներով:
7. Հրաշալի տեսարան էր. հեռվում երևում էին Մասիս սարը՝ ձյունափառ գագաթով, և Արարատյան դաշտը՝ պտղատու այգիներով ու տոթակեզ գյուղերով:
8. Ընկերոջս՝ Սուրենի վարձած սենյակում, մենք մեզ լավ էինք զգում, սակայն հաճախ էինք դուրս գալիս տնից՝ փողոցներում աննպատակ թափառելու:
9. Չնայած մեզ հանձնարարված էր այդ գործն արագ ավարտին հասցնել՝ մենք հանգիստ զբոսնում էինք այգում և զմայլվում շրջակայքի գեղեցկությամբ:

26 **Քարդ ստորադասական նախադասություններից 3-ը ճիշտ են փոխակերպված պարզի: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. *Դու, որ այս աղետից էլ շատ առաջ ողջ գիտակցական կյանքում կշռել ես հայոց աշխարհի բախտը, ստիպված ես արագ վճիռ կայացնել:*
   Դու՝ այս աղետից էլ շատ առաջ ողջ գիտակցական կյանքում հայոց աշխարհի բախտը կշռածդ, ստիպված ես արագ վճիռ կայացնել:

2. *Տատի տարօրինակ այդ պատմությունը, որը նպատակ ուներ երկյուղած տրամադրություն ստեղծելու թոռան սրտում, վատ ազդեց երեխայի վրա:*
   Տատի տարօրինակ այդ պատմությունը, նպատակ ունենալով երկյուղած տրամադրություն ստեղծելու թոռան սրտում, վատ ազդեց երեխայի վրա:

3. *Մինչ պարսիկ հարկահանները կդատարկեին վանքի մառանները, հոգևորականները շտապով թաքցրին մագաղաթյա մատյանները:*
   Պարսիկ հարկահանների՝ վանքի մառանները դատարկելուն պես հոգևորականները շտապով թաքցրին մագաղաթյա մատյանները:

4. *Հենց այն առավոտ, երբ սուրհանդակը գուժեց Տիզբոնից բերած բոթը, Սամվելի մտքում մի մռայլ խորհուրդ ծագեց:*
   Հենց այն առավոտ՝ սուրհանդակի՝ Տիզբոնից բերած բոթը գուժելու պահին, Սամվելի մտքում մի մռայլ խորհուրդ ծագեց:

5. *Թե ինչ տանջանքներ քաշեցին նրանք, ինչ զրկանքների բովով անցան, գիտեին միայն իրենք ու իրենց մտերիմները:*
   Միայն իրենք ու իրենց մտերիմները գիտեին նրանց՝ ինչ տանջանքներ քաշելը, ինչ զրկանքների բովով անցնելը:

6. *Մասիսներն այնքան մոտիկ էին երևում, որ գրեթե նշմարելի էին հեռվից սևին տվող նրանց խոռոչները:*
   Մասիսները հեռվից սևին տվող նրանց խոռոչները գրեթե նշմարելի լինելու չափ մոտիկ էին երևում:

7. *Քուրդ իշխանի վաղուց փայփայած բաղձանքն այն էր, ինչ առաջարկում էին հայոց առաջնորդն ու իշխանները:*
   Հայոց առաջնորդի ու իշխանների առաջարկածը քուրդ իշխանի վաղուց փայփայած բաղձանքն էր:

8. *Այդ կինը, չնայած ամիսներով Պետրոսի քաղցր խոսքին անգամ չի արժանանում, կյանքից գոհ է:*
   Ամիսներով Պետրոսի քաղցր խոսքին անգամ չարժանանալու դեպքում այդ կինը կյանքից գոհ է:

9. *Նրանց դավաճանությունը հաստատվում էր նրանով, որ Կոդակը հետզհետե ավելի էր ամփոփվում իր մեջ և ամեն բան չէր պատմում Գյուտին:*
   Կոդակի հետզհետե իր մեջ ավելի ամփոփվելը և Գյուտին ամեն բան չպատմելը հաստատում էր նրանց դավաճանությունը:

27 **Տրված ուղղակի խոսքով նախադասություններից 3-ը ճիշտ են փոխակերպված անուղղակիի: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. *- Դու ինձ, խնդրեմ, մի՛ սովորեցրու, թե ինչպես ապրեմ,- ասաց կինն իր հետ խոսող տղային.- ես թույլ չեմ տա, որ քեզ նման երիտասարդներն ինձ կյանք սովորեցնեն:*
   Կինն իր հետ խոսող տղային ասաց, որ խնդրում է՝ նա իրեն չսովորեցնի, թե ինքը ինչպես ապրի. ինքը թույլ չի տա, որ նրա նման երիտասարդներն իրեն կյանք սովորեցնեն:

2. *Սուրենը վիրավորված ասաց հիմնարկի ղեկավարին.*
   - Պնդումը, թե իմ աշխատանքն արդյունավետ չէ, ես չեմ ընդունում:
   Սուրենը վիրավորված ասաց հիմնարկի ղեկավարին, որ պնդումը, թե իր աշխատանքն արդյունավետ չէ, նա չի ընդունում:

3. *- Հայտնի ճշմարտություն է. եթե սիրում ես հայրենիքդ, ապա պետք է նրան նվիրես ողջ կյանքդ,- ասաց զորավարը և ավելացրեց.- մենք բոլորս էլ պարտք ունենք կատարելու:*
   Զորավարն ասաց՝ հայտնի ճշմարտություն է. եթե սիրում ես հայրենիքդ, ապա պետք է նրան նվիրես ողջ կյանքդ, և ավելացրեց, որ իրենք բոլորն էլ պարտք ունեն կատարելու:

4. *- Լավ չէ՞ր լինի՝ դուք էլ կարողանայիք նման կերպ պատասխանել թշնամիներին,- հարցրեց մի ծերունի՝ նայելով իր առջև կանգնած զորականներին:*
   Մի ծերունի, նայելով իր առջև կանգնած զորականներին, հարցրեց, թե արդյոք լավ չէր լինի՝ իրենք էլ կարողանային նման կերպ պատասխանել թշնամիներին:

5. *- Քանի որ հին սեպագրերի մասնագետ եմ, կարող եմ ջանք գործադրել և կարդալ այդ տարօրինակ արձանագրությունը,- ասաց գիտնականը:*
   Գիտնականն ասաց, որ քանի որ ինքը հին սեպագրերի մասնագետ է, կարող է ջանք գործադրել և կարդալ այդ տարօրինակ արձանագրությունը:

6. *- Ես չեմ կարող համարժեք պատասխան տալ այդ աննրբանկատ մարդուն,- ասաց Մարգարիտը.- նա բոլորիս հետ վատ է վարվում և կարծում է՝ մեզնից ոչ ոք դա չի նկատում:*
   Մարգարիտն ասաց, որ ինքը չի կարող համարժեք պատասխան տալ այդ աննրբանկատ մարդուն. նա բոլորի հետ վատ է վարվում և կարծում է՝ ոչ ոք դա չի նկատում:

7. *Դիմելով Պապ թագավորին՝ արքունի սպասավորն ասաց.*
   - Եթե պատվիրակությունը չընդունի Ձեր առաջարկները, ստիպված պիտի ներկայանանք բյուզանդական կայսերն ու խնդրանքով դիմենք նրան:
   Դիմելով Պապ թագավորին՝ արքունի սպասավորն ասաց, որ եթե պատվիրակությունը չընդունի նրանց առաջարկները, ստիպված պիտի իրենք ներկայանան բյուզանդական կայսերն ու խնդրանքով դիմեն նրան:

8. *- Մենք այնքան ենք մտերմացել, սիրելի՛ս, որ ես կարող եմ քեզ հայտնել իմ ամենանվիրական գաղտնիքները,- ասաց Դերենիկը աղջկան:*
   Դերենիկը ասաց իր սիրելի աղջկան, որ իրենք այնքան են մտերմացել, որ ինքը կարող է նրան հայտնել իր ամենանվիրական գաղտնիքները:

9. *Դիմելով հաճախորդին՝ վաճառատան տերն ասաց.*
   - Չնայած քո խնդրանքը կատարելը շատ դժվար կլինի, բայց ես կանեմ ամեն ինչ՝ նաև իմ պատիվը փրկելու համար:
   Դիմելով հաճախորդին՝ վաճառատան տերն ասաց, որ չնայած նրա խնդրանքը կատարելը շատ դժվար կլինի, բայց ինքը կանի ամեն ինչ՝ նաև իր պատիվը փրկելու համար:

28 **Տրված պնդումներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ***Արմատ+և/ու+արմատ*** կաղապարով բառերը անհոդակապ բարդ բառեր են:

2. Երկու գոյականական արմատներից կազմված բարդ բառը չի կարող լինել ածական:

3. Միևնույն բառակապակցությունը, ըստ համատեքստի, մի դեպքում կարող է դարձվածք լինել, մի այլ դեպքում՝ ոչ:

4. Կան բառեր, որոնց ուղիղ ձևն ավարտվում է գրվող ***ը***-ով:

5. Բառավերջի ***և*** -ն երբեք չի հնչյունափոխվում:

6. ***Որ, թե*** թարմատարով բաղադրյալ շաղկապների շեշտն ընկնում է առաջին բաղադրիչի վրա:

7. Որոշ բառերում արմատական ***ույ*** երկհնչյունը կարող է սղվել:

8. ***Անվան, մահվան*** բառաձևերը առաջացել են միևնույն հոլովման և միևնույն հնչյունափոխության արդյունքում:

9. ***Պարարվեստ, պարագույգ, պարականոն*** բառերում ***պար***-ը արմատ է:

29 **Տրված պնդումներից 3-ում սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Բառավերջում ***ում*** ածանց ունեցող բոլոր գոյականները ենթարկվում են ***ան*** հոլովման:

2. Ներգոյական հոլովը կազմվում է ***ում*** վերջավորությամբ կամ սեռական հոլովով և ***մեջ*** կապով:

3. Անկանոն բայերը անկանոնություն են դրսևորում միայն անցյալի հիմքից կազմվող ձևերում:

4. Հարաբերական ածականը չի կարող լինել կազմությամբ պարզ բառ:

5. Եզակի հրամայականում ***ու*** վերջավորություն կարող են ստանալ միայն պատճառական բայերը:

6. Ներգործական սեռի բայերը միաժամանակ կարող են ունենալ և՛ հանգման խնդիր, և՛ ուղիղ խնդիր լրացում:

7. Անորոշ դերբայը հոլովվում է ոչ թե փոխանվանական, այլ իր բուն կիրառությամբ:

8. Ժամանակակից հայերենում ածականը կարող է հոլովվել նաև ոչ փոխանվանաբար գործածված լինելու դեպքում:

9. ***Ն, չ*** սոսկածանցները ընկնում են հարակատար, ենթակայական դերբայներում, վաղակատար ձևաբայում, անցյալ կատարյալում և հրամայականում:

30 **Տրված պնդումներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Որոշիչ ստորադաս նախադասությունը կարող է փոխարինել գերադասի ***այն, այնքան, այնպես*** հարաբերյալներին:

2. Բացահայտիչ ստորադաս նախադասության ստորոգյալը կարող է լինել և՛ պարզ, և՛ բաղադրյալ:

3. Իբրև բաղադրյալ ստորոգյալի հանգույց չի կարող հանդես գալ ***կոչվել*** բայը:

4. Նախադաս որոշիչ դերբայական դարձվածը որոշյալից երբեք չի տրոհվում:

5. Դերբայական դարձվածը նախադասության ստորոգյալին միշտ կապվում է խնդրառությամբ:

6. Պարագայական բացահայտիչը կարող է արտահայտվել համակատար դերբայով:

7. Անջատման անուղղակի խնդիրը, բացի բացառականից, որևէ այլ հոլովով չի կարող դրվել:

8. Բաշխական թվականները կարող են հանդես գալ և՛ որոշչի, և՛ չափ ու քանակի պարագայի պաշտոնով:

9. Կապական կառույցով կարող են արտահայտվել ինչպես բայական, այնպես էլ գոյականական անդամի լրացումները: